

## 70. ՔՈՌՈՒ ԸԱՌ

Քոռն ու սաղ դատավորի յառջև կանած՝ դավի կէնեն չիրարուց.  
Քոռն ըսեց.

— Դատավոր, ես հեծեր ենք զէշ, իմ կնիկ լե զիշու շմբու կը քաշեր, իդա մարդ էկավ հասավ մըզի, զիմ էշն ու կնիկ խլեց ընձնն, մանցի շիվար-շարփազա:

Սաղն ըսեց.

— Դատավոր, էդ մարդ սուտ կըսե: Ես ու իմ կնիկ էն դիուց դիկենք, տեսանք՝ մինակ նստուկ է վըր ճամպուն, խղճացի, դրի վըր. իշուն, բերի հարի գեղի յեզր: Նագահան ճչաց, փաթվավ իշու վզին, բոռաց, թե՛ ռիգա մարդ զիմ էշն ու կնիկ խլեր է, շիտա, օգնութե՛ն, օգնութե՛ն»։ Ինչ էրինք-չէրինք՝ շարա շէղավ, դավին էկավ հասավ քըզի:

Դատավորն ըսեց:

— Կարելի է, օր էշն էդնի քոռուն, հմա կնկա հմար վկեք է պետք: Տարեք շոկ-շոկ դրեք բոնատուն, անկաջ էրեք տեսեք ուրանք-ուրանք ի՛նչ կը խոսան՝ արեք ընձի ըսեք:

Կնիկ կըսեր.

— Վա՛յ, անխե՛լք մարդ, վա՛յ, չէ՞ օր ես ըսի հեռուն մանցի քոռուց, ուրնե շառ կը ծնի: Զըլսեցի՞ր, զէշն առավ, զկնիկդ լե առներ՝ աղե՛կ էր:

Մարդ կըսեր.

— Խեղճ կնիկ ընձի ըսեց, ես չը լսեցի: Իդա հմլա բան ո՞ն է տեսի: Դատավոր զէշ տվեց քոռուն, վա՛յ թե զկնիկ լե առնե տա, հմլա բան ո՞ն է լսի:

**Քոռ կրսեր.**

— **Զէշն առա, կնիկ շե օր առնիմ՝ իմ քեֆին քեֆ չը հասնի՛:**  
**Դատավոր զրանի էութեն գիմնա, զէշն ու կնիկ կիտա մարգուն,**  
**քոռի պառեկին քանի մը փետ կը քաշե, կը ճամպե ուր տուն, մտքի**  
**մեջ կըսե.**

— **Աստված քոռու շառից հեռու պահե մըզի: Ա՛մեն:**

